ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ БОГОСЛОВИЯ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF THEOLOGY

ՏԱՐԵԳԻՐՔ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԺԱ

ЕЖЕГОДНИК

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ

ТОМ XI

YEARBOOK

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

VOLUME XI

ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ
ЕРЕВАН - 2016

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 2016

YSU PRESS
YEREVAN - 2016

ԲԱՂԴԱՍԱՐ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԸ ԵՎ ՇՈՒՇԻԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ

Կրշակ Բալյան

Բաղդասար Մետրոպոլիտը «վերջին մոհիկանն» է Արցախ աշխարհի նշանավոր իշխանական Հասան-Ջալալյան տոհմի: Ծնվել է պատմական Խաչենի Գանձասար, Վանք գյուղում 1775 թվի դեկտեմբերի 12-ին: Նա Հասան-Ջալալյան Դանիել-բեկի երկու որդիներից կրտսերն էր, եղբորորդին Սարգիս և Հովհաննես Աղվանից կաթողիկոսների:

Մանուկ հասակից Բ. Հասան-Ջալալյանը ծանոթ է եղել վանական-եկեղեցական կյանքին, նաև Իբրահիմ խանի խարդավանքներին ու չարաղետ հալածանքներին: Նրա հայրը, Դանիել-բեկը մասնատվում է Իբրահիմ խանի տանջարան բանտում: 1851 թ. Բաղդասար Մետրոպոլիտը, հուղարկավորելով հոր մասունքները, որ հորաքույրը կարողացել էր հավաքել, ի մի բերել, շիրմաքար-արձան է կանգնեցնում, սրտառուչ մակագրությամբ: Հուշարձան-մահարձանը գոյություն է ունեցել Լեոյի ժամանակ Շուշվա հին գերեզմանատանը, քաղաքի հարավային մասում:

Հորեղբայր կաթողիկոսը նրան գրագիտություն է սովորեցրել: Այնուհետև ստիպված Հասան-Ջալալյանների հետ ապաստանել Գանձակ քաղաքում՝ խուսափելով Իբրահիմ խանի հեծյալներից:

Լինելով ուշիմ, հետաքրքրասեր, հատկապես հոգևոր, կրոնական կյանքի, կենցաղի ու սովորությունների հանդեպ, նա մի որոշ կրթություն է ստացել հորեղբոր՝ Սարգիս կաթողիկոսի մոտ (Վավերագրեր, էջ 905), այնուհետև Թիֆլիսում աշակերտել Ս. Պատկանյանին (Լեո, 104-105) 1799 - 1802 թթ. ընթացքում:

1792 թ. հունվարի 12-ին Սարգիս Աղվանից կաթողիկոսը Բաղդասարին ձեռնադրել է սարկավագ:

1796 թ. Սարգիս կաթողիկոսը Բաղդասարին շնորհում է ավագ սարկավագության կարգ (Լեո, էջ 103): Գանձակի Ս. Հովհաննես եկեղեցում: Նույն եկեղեցում 1798 թ. Բաղդասարը վարդապետ է ձեռնադրվում (Լեո, էջ 103, թեև ՀԱԵ կանոնակարգի, վարդապետ օծվում են, ոչ թե ձեռնադրվում): 1820 թ. Էջմիածնում Եփրեմ Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից նրան շնորհվում է եպիսկոպոսության կարգ (Լեո, էջ 112):

1808 թ. Իբրահիմ խանի և Իսրայել կաթողիկոսի մահվան լուրը ստանալուց հետո Բաղդասար վարդապետը Սարգիս կաթողիկոսի հանձնարարությամբ գնում է Ղարաբաղ՝ Գանձասար:

Բաղդասարը հայրենի օջախը գտնում է ավերված, թալանված, միաբանությունից զուրկ: Եվ նա ջանք չի խնայում Գանձասարը կարգի բերելու համար: Հավաքում, իրենց բնակավայրերն է վերադարձնում վանքապատկան, ցրիվ եկած գյուղացիներին, որոնք կոչվում էին վանքի ճորտեր: Ճորտերի ձեռքով վանքի համալիրը կարգի է բերում, դարձնում բարետես:

Վանքի տերերի, խնամակալների երկարատև բացակայության պատճառով կալվածքները գրեթե ամբողջովին հափշտակվել, գողացվել էին: Բաղդասար վարդապետը համարձակ ասպարեզ դուրս եկավ վանքի իրավունքները վերականգնելու, պաշտպանելու: Եվ նրան հաջողվեց հափշտակիչներից խլել, ետ բերել կալվածքները, վերականգնել վանքի հաստատությունը:

Բաղդասարը, կանոնավոր կրթություն չստանալով, աշխարհիկ լայն գիտելիքներ չունենալով հանդերձ, ջանք չէր խնայում Գանձասարի վանքը մտավոր կենտրոն դարձնելու համար:

Երկար տարիներ Հաղբատում ապրող Սարգիս մետրոպոլիտ Հասան-Ջալալյանը 1812 թ. վերադառնում է Գանձասար, սակայն առանց կաթողիկոսության իրավունքի, իբրև սոսկ առաջնորդ: Նրա մահից երկու տարի հետո (1828 թ.) կաթողիկոսական աթոռը մնում է թափուր: Ղարաբաղի հոգևոր ու աշխարհիկ տերերը դիմում են Էջմիածին՝ Եփրեմ կաթողիկոսին, որպեսզի Բաղդասարը ժառանգի իր նախնիների աթոռն ու հոգևոր պաշտոնը: Դիմումը ընթացք է ստանում:

1830 թ. նոյեմբերի 13-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Եփրեմը Բաղդասարին շնորհում է մետրոպոլիտի աստիճան և Գանձասարի թեմի առաջնորդությունը (Լեո, էջ 114):

Քաղաքական, հասարակական իրավիճակը փոխվում է արմատապես: Նոր, ռուսական վարչակարգը ձևավորում է ներքին կյանքն ուղղորդող, կարգավորող կազմակերպություններ:

1836 թ. մարտի 11-ին Կայսրության բարձրագույն իշխանությունը հաստատում է հայ լուսավորչական եկեղեցու վերաբերյալ օրենքներ, որ հայտնի է «положение» (դրույթ) անվամբ («Об управлении духовных дел христиан Армяно-Григорианского вероисповедания»): Համաձայն օրենքի

Ռուսաստանում ստեղծվում են վեց հայ-լուսավորչական թեմեր (Լեո, էջ 97): Վեց թեմերից մեկը Ղարաբաղի թեմն էր: Այն բավականին փոքր էր, բաղկացած էր երեք քաղաքներից՝ Շուշի, Նուխի, Լենքորան, 156 գյուղերից, բոլորը միասին 7167 տուն հայ բնակչություն (ըստ 1840 թ. տվյալների), Շաքի և Թալիշ գավառները: Թեմական առաջնորդի նստավայրը, նաև կոսիստորիայի (թեմական ատյանի) տեղը հաստատվում է Շուշին:

Տեղափոխելով առաջնորդական (աթոռը) Շուշի, Բաղդասար մետրոպոլիտը՝ իր ապրելու և պաշտոնավարելու, հոգևոր դպրոց բացելու հարմար բնակավայր չգտավ: Նա դիմեց Շուշվա ժողովրդին հանգանակության խնդրանքով՝ տուն ձեռք բերելու համար: Եվ բարեգործ գտնվեց: Ոմն Պողոս Հասան-Ջալալյան, հավանաբար մետրոպոլիտի ազգականներից, 3000 ռուբլով գնում է երկհարկանի առաձնատուն պարտեզով, նվիրում Բաղդասար մետրոպոլիտին սեմինարիայի՝ հոգևոր դպրոցի համար: Նաև նվիրում է 2000 ռուբ. շենքի վերանորոգման համար: Մետրոպոլիտը նրան փոխարենը խոստանում է պրապորշչիկի չին ու արծաթե մեդալ: Մետրոպոլիտը չի կարողանում կատարել խոստումը, ստիպված Պողոս Հասան-Ջալալյանին փաստաթուղթ է տալիս, որ վերջինս երկհարկանի տան տերն է (Լեո, էջ 127 - 128): Սակայն Բաղդասար մետրոպոլիտը հուսահատվողներից չէր: 1843 թ. նա իր խնայողություններով Շուշվա կենտրոնում սկսում է կառուցել մի շքեղ շենք իր բնակության և ատյանի (կոնսիստորիայի) համար (Լեո, էջ 129):

Բաղդասար մետրոպոլիտը ամենայն ուշադրությամբ հետևում էր վանքերի բարեկարգմանը, վանականների կյանքին, կենցաղին, որ սակայն գոհացուցիչ չէին: Հանգանակությունը չօգնեց: Հատկապես մտահոգ էր Գանձասարի վիճակով: Ամենայն Հայոց Ներսես կաթողիկոսը նույնպես նրան չօգնեց: 1850 թ. մետրոպոլիտն իր խնայողություններից 5000 ռուբ. ծախսեց Գանձասարի վերանորոգման վրա (Լեո, էջ 136), թեև նա հիվանդ էր, տառապում էր հոդացավով:

Բաղդասար մետրոպոլիտը համառ ու երկարատև ջանք, եռանդ գործադրեց վանքապատկան կալվածները վերադարձնելու համար, հատկապես Խոթա վանքի, որը խիտ անտառների մեջ էր ու անմարդաբնակ, գողերի համար ու հափշտակիչների՝ մատչելի, հասանելի: Մանավանդ եթե նկատի ունենանք, որ հիվանդ մետրոպոլիտը խնդրում էր բարձրացնել իր աշխատավարձը, քանի որ ստացածը ծախսում էր վանքապատկան կալվածքների վեճերի դատական գործերի վրա: Ավելորդ չենք հա-

մարում նշել, որ նա իր կտակում գրել է. «Եթէ կամօքն Աստուծոյ ապատ լիցին տեղիքն այնոքիկ ժամանակաւ, այնոքիկ կալվածք Խօթայ վանից կարեն բաւականանալ աւելի քան երկու հազար տուն բնակչաց» (Լեո, էջ 174): Բայց այն մի շարք կալվածների, վարելահողերի, որոնք նա կարողացել էր վերադարձնել իրենց տերերին:

Մետրոպոլիտ Բաղդասարը ձեռնարկեց թեմի կրթական գործը կարգավորելուն, ըստ գոյություն ունեցող հրահանգների ու օրենքների, ցուցաբերելով իրեն հատուկ սրտացավություն ու հայրենասիրություն:

Մինչ Բազելի միսիոներական ավետարական ընկերության ասպարեզ գալը Շուշիում գործում էր երկու ուսուցիչ, ովքեր վայելում էին Շուշվա հասարակության սերն ու հարգանքը, այդ թվում՝ Խաչենի Ղշլաղ գյուղացի Հովսեփ Տեր-Ավագյանի, հայտնի Արցախեցի մականունով: Երկրորդ գործիչը՝ ուսուցիչ Պողոս վարդապետ Ղարաբաղցի մականունով նույնպես Շուշիում ժողովրդականություն ու հարգանք վայելող անհատականություն էր: Դպրոցները գործել են Գանձասար և Ս. Հակոբա վանքերում: Ժամանակի քիչ թե շատ բոլոր գրագետները ուսանել են Հովսեփ Արցախցու մոտ: Վերջինս մահացել է խոր ծերության հասակում, թաղված է համաձայն Մետրոպոլիտի կարգադրության Գանձասարի հյուսիսային կողմում: Նրանք, երկու ուսուցիչները Շուշիում էին, քաղաքի մեծատունների հրավերով վերջիններիս երեխաներին ուսում տալու նպատակով:

Պողոս վարդապետը եկել էր Տաթևի միաբանությունից: Իբրև ուսուցիչ հայտնի էր Էջմիածնում, Թիֆլիսում: Նրան աշակերտել էին Խ. Աբովյանը, Ստ. Նազարյանը, Մ. Թաղիադյանը (Լեո, էջ 86): Ներսես Աշտարակեցին նրան է հանձնում նորաբաց դպրոցը Թիֆլիսում: Ինքը Պողոս վարդապետը ուսանել էր Հովսեփ Արցախցուն:

Մինչև թեմական ուսումնարանի բացումը Շուշիում գործում էր նաև Բազելի մի այլ՝ «Ավետարանական Քարոզչական ընկերությունը», որը այդտեղ հիմնավորվել է 1823 թ. (Լեո, էջ 87), նախապես (1822 թ.) թույլտվություն ստանալով Ս.Պետերբուրգից: Թեև «Ընկերության» նպատակն էր այլդավանների մեջ քրիստոնեություն տարածելը, բայց ընտրելով Շուշին, նրանք հողամաս գնեցին ՝ իրենց ուսումնարանը, տպարանը, տունը տեղավորելու համար սեփական շենք կառուցելու նպատակով (Լեո, էջ 87): «Ընկերության» գործունեությունը ղեկավարում էին համալսարանավարտ Ավգուստ Դիտրիխը և Ֆեշիցիան:

«Ընկերության» նպատակն էր տարածել Աստծո խոսքը տեղական լեզուներով՝ պարսկերեն, թուրքերեն, արաբերեն: Որպեսզի Սուրբ գիրքը տպագրեն հիշյալ լեզուներով, տեղում բացվելիք դպրոցների համար Բազելի միսիոներները տպարան հիմնեցին, սակայն այլադավանների մեջ քրիստոնեություն տարածելու նրանց միսիան չիրականացավ՝ իրենց իսկ սխալ մոտեցումների պատճառով: Փոխարենը 1827 թ. Շուշիում բացվեց նրանց ուսումնարանը (Լեո, էջ 89), որը մի տարի անց ուներ 130 աշակերտ, 10 - 18 տարեկան, մեծմասամբ ղարաբաղցիներ, գլխավորապես չքավորներ: Այդ դպրոցում ուսուցչություն էր անում նաև Պողոս վարդապետ Ղարաբաղցին:

Բազելի միսիոներական դպրոցը բավականին նպաստեց Արցախի կրթական կյանքի առաջընթացին, օրինակ, ծառայեց ժողովրդական կըրթության վրա Ռուսական իշխանությունների ուշադրություն դարձնելուն: Ծնունդ առան պետական դպրոցներ՝ հայտնի գավառական անուններով: Միսիոներական դպրոցի շրջանավարտները նույնպես, նույն միսիոներների օգնությամբ բացում էին տեղերում փոքր դպրոցներ: Այդպես բացվեցին երկու դպրոց Շուշիում, երեքը՝ գյուղերում (Լեո, էջ 90 - 91):

Բազելի քարոզիչները կրթական գործունեությունը համադրում էին հրատարակչականի հետ: Նրանց տպարանը բացվեց 1827 թ.: Քարոզիչները հասկանում էին և գնահատում ժողվրդական լեզվի մատչելիության նշանակությունը իրենց ծրագրերի տարածման, ժողովրդականացման գործում: Քարոզիչներն իրենք էլ սովորում էին տեղական լեզուները, բարբառները:

Շուշիի միսիոներների տպարանը, Մոսկովյանը ներառյալ, իր գործունեության ընթացքում տպագրել է 11679 հայերեն, 100 եբրայերեն, 728 պարսկերեն, 147 թուրքերեն գիրք (Լեո, էջ 92): Մետրոպոլիտ Բաղդասարը թեև որոշ հարցերում տարակարծիք էր, համակրանքով էր վերաբերվում Բազելի միսիոներների կրթական գործունեությանը:

Բազելի տպարանում հրատարակված գրքերը կրում էին ժամանակի կաթողիկոսի և թեմական առաջնորդի անունը: 1828 թ. և 1830 թ. հրատարակությունների վրա անուններ չեն նշված:

Ավետարանական ընկերությունը դադարեցրեց իր գործունեությունը և թողեց Շուշին: Պատճառները թե՛ արտաքին էին, թե՛ ներքին: Ռուսական կայսրության միջամտությունը վճռեց խնդիրը: 1835 թ. (Լեո, էջ 95) Կառավարությունն արգելեց ավետարանականներին զբաղվել քարոզչու-

թյամբ: 1837 թ. նրանք արդեն հեռացել էին Շուշիից, վաճառելով իրենց ունեցվածքը:

Մինչև սեմինարիայի բացումը հոգևոր ուսումնարանների վերաբերյալ պահպանվել են միայն նրանց անվանումները: Կառավարության 1838 թ. մի ցուցակում նշված է. «Դպրոցք հայկական լեզուի և տեղիք նոցին»»: «Չորս՝ ա) ի վանս Գանձասարու, բ) ի վանս Ճալէթու, գ) ի Մենաստանին սրբոցն Յակոբայ և դ) Շուշի բերդաքաղաքի: Հայտնի է, որ Ճալէթի վանքի դպրոցում սովորում էին 15 «ընթերցող-աշակերտք», Շուշվա դպրոցի մասին ոչինչ հայտնի չէ:

Բաղդասար մետրոպոլիտի կրթական-լուսավորչական գործունեությունը արժևորվում է մի այլ կարևոր, ժամանակի համար բավականին առաջադեմ երևույթով՝ տպարանի գոյությամբ: Բազելի միսիոներների տպարանը լույս ընծայեց մի շարք գրքեր, որոնք նշանակալից դեր խաղացին հայոց աշխարհաբար լեզվի զարգացման ընթացքում: «...այդ տպարանը աշխարհաբար գրականության ծառայություններ արավ» (Լեո, էջ 121):

Նույնը չի կարելի ասել տպարանի գործունեության վերաբերյալ, երբ նրա տերը դարձավ Բաղդասար մետրոպոլիտը և կրում էր «Տպարան Վիճակաւոր Առաջնորդին Ղարաբաղու բարձր Սրբազան Մետրոպոլիտին Բաղդասարայ»: Տպագրվում էին միայն կրոնական բովանդակությամբ գրքեր մետրոպոլիտի թույլտվությամբ: Սակայն Շուշիի տպարանը տարիներ անց հրատարակեց նաև աշխարհիկ բովանդակությամբ գրքեր, նույնիսկ հայ իրականության մեջ առաջինը հանդիսանալով, ինչպես օրինակ «Շիլոնիան կալանավորը» (1837 թ.), Շիլլերի՝ Մովսես Զոհրաբյան Արցախեցու թարգմանությամբ (Լեո, 124), Եսայի Հասան-Ջալալյանի «Պատմութիւն Սրբազնակատար կամ յիշատակ ինչ-ինչ անցից՝ դիպելուց յաշխարհին Աղուանից ի Տեր Եսայայ Հասան Ջալալեանց» (1839 թ.):

Ղարաբաղի թեմական դպրոցը բացվել է 1838 թ. հունիսի 22-ին: Բացվել է մի փոքր շինությունում, աղքատության մեջ: Աշակերտների թիվը «աւելի քան զքսան», բոլորը պատրաստվում էին մի՝ առաջին դասարանում: Սեմինարիայի առաջին ուսուցիչներն էին. կոնսիստորիայի անդամ Առաքել քահանա Յուզբաշյանը (հայոց լեզու), նույն կոսնիստորիայի թարգման Սարգիս Աթաբեկյանը: Երկուսն էլ դասավանդում էին անվճար: Այնուհետև հայոց լեզվի ավագ ուսուցիչ է նշանակվում Ագուլեցոց

եկեղեցու սարկավագ Գրիգոր Տեր-Ավագյանը, որը նույն պաշտոնը վարում էր Շուշիի գավառական ուսումնարանում, Մոլլա-Մահմադ Մոլլա-Ալահվերտովը՝ պարսկերեն: Այս երկուսն էլ ծառայում էին նույնպես անվճար, առաջինը մինչև մյուս ուսուցիչների վարձատրությունը, իսկ երկրորդը բավարարվում է մեկ տարի առանց աշխատավարձի:

Մեկ տարի հետո Մոլլա-Ալահվերտովը ստանալով 60 ռուբ.՝ մեկ տարվա համար, արձակվում է պաշտոնից, պարսկերենի ուսուցիչ է հրավիրվում Միրզա-Ֆարրուխ Ամիրխանյանը, հայոց լեզվի ուսուցիչ է կարգվում տիրացու Հարություն Մելքոնյանը: Ռուսաց լեզվի ուսուցիչներ նշվում են Գաբրիել Մամիկոնյանը, Սողոմոն Կուզանովը: Սեմինարիան՝ Հոգևոր ճեմարանը, տեղավորված էր Մեսրոպ Թառումյանի տանը, Ագուլեցոց եկեղեցու մոտ:

Սեմինարիայի հետագա տարիների գործունեության վերաբերյալ քիչ բան է հայտնի: 1840 թ. հուլիսի 24-ի հարցաքննությունից հայտնի է, որ սեմինարիայում անցնում են. 1) Օրենք Աստվածային, 2) Սրբազան պատմություն, 3) Հայոց քերականություն, 4) Ի ռուս լեզվի ընթերցանություն և քերականություն, 5) Պարսկական լեզու, 6) Թվաբանություն, 7) Երգեցողություն: 1842 թ. ուսուցիչների թիվը կազմել է 4, աշակերտներինը՝ 65:

Բաղդասար մետրոպոլիտը դպրոցի բացման առաջին իսկ շրջանից հասկանում էր «Положение»-ով (դրույթներով) նշված միջոցառումներով պահել դպրոցը հնարավոր չէր: Թեմը փոքր էր և աղքատ: Մետրոպոլիտն առաջարկում է Էջմիածնի Սինոդին պետությունից նպաստ խնդրել: Առաջարկությունը մերժվում է, պատճառաբանելով, թե թեմականը պետք է պահվի թեմի հաշվին: Ընդունվեց մի առաջարկություն. հավաքել տուրք թեմի յուրաքանչյուր ընտանիքից 20-ական կոպեկ, ինչպես մնացած թեմերում: Տուրքը կոչվում էր սրբադրամ: Մետրոպոլիտն առաջարկեց ավելացնել սրբադրամը, դարձնել 40 կոպեկ: Այդ առաջարկությունն էլ մերժվեց:

Բաղդասար մետրոպոլիտը 1837 թ. գնաց Էջմիածին «Положение»-ով (դրույթներով) նախատեսված հայ նորաստեղծ համակարգին ծանոթանալու, այն հնարավորինս շուտ կյանքի կոչելու, նաև կոնսիստորիաների, հոգևոր կառավարությունների, հոգևոր դպրոցների կապակցությամբ: Նորակազմ թեմի առաջնորդը համաձայն նոր օրենքի պետք է երդում ընդուներ:

Երևանում մետրոպոլիտը ծանոթանում է օրենքի կիրառության կարգին, սեմինարիայի և այլ պաշտոնյաների ցանկին, նրանց ռոճիկների չափին:

1839 թ. հունվարի 23-ին Ղարաբաղի կոնսիստորիան Սինոդին է ուղարկում «Հոգևոր Ճեմարանի և հոգևոր ուսումնարանաց» նախահաշիվը: 1839, 1840, 1843 թթ. հոգևոր դպրոցի մուտքերը և վարձատրությունը ուսուցիչներին, հոգևոր դպրոցի զբաղեցրած տան վարձը չի հատուցվում: 01.09.1843 թ. մետրոպոլիտը գրում է Սինոդին ստեղված ծանր վիճակի մասին, հայտնում, որ համոզել է ուսուցիչներին մինչև նոյեմբեր շարունակել աշխատանքը, հակառակ պարագայում ստիպված է փակել հոգևոր դպրոցը (Լեո, էջ 187): Եվ 1844 թ. մարտի 1-ին մետրոպոլիտը չկարողանալով խոստումներով գրավել ուսուցիչներին, փակում է այն՝ «վասն ոչ ստանալոյն նոցա արժանաւոր վարձատրութիւնս» (Լեո, էջ 188):

1845 թ. հուլիսի 16-ին Բաղդասար մետրոպոլիտը հայտնում է հոգևոր դպրոցի վերաբացման մասին: Կոնսիստորիային ուղղված գրության մեջ հոգևոր ուսումնարանի բացման մասին, նա խոստովանում է այն տառապանքի մասին, որ նա կրել է դպրոցի փակման կապակցությամբ (Լեո, էջ 188):

Բաղդասարը հույսեր էր կապում թեմի ժողովրդից հանգանակվող միջոցների հետ: Սակայն Շուշվա մեծահարուստներից ժողովվեց ընդամենը 187 ռուբլի (Լեո, էջ 189): Եվ այնուամենայնիվ, Շուշիում գտնվեցին բարեգործներ: Մետրոպոլիտը հայտնում է «տիտուլյառնի սովետնիկ», գավառական դպրոցի տնօրեն, հայազգի Մելքոն Խիտրովի մասին, որը հանձն է առել անվճար դարձնել հոգևոր դպրոցի ոչ միայն տեսչությունը, այլև ռուսաց լեզվի, թվաբանության, աշխարհագրության դասավանդումը՝ «ի սեր ազգի և հայրենի իւրոյ եկեղեցւոյ» (Լեո, էջ 189): Իսկ Աղա Անդրեաս-բեկ և Սարգիս-բեկ Քալանթարյանները վեց ամսով անվճար դպրոցին տրամադրեցին իրենց տունը (Լեո, էջ 189):

Մետրոպոլիտը հանուն դպրոցի գոյության հաճախ էր դիմում ժողովրդին, սակայն նրա սպասելիքները միշտ չէ որ արդարանում էին: 1845 թ. դպրոցը պահպանելու նպատակով երկու անգամ ժողովրդին դիմելուց հետո հավաքվել էր ընդամենը 287 ռուբ. (Լեո, էջ 192): Շուշիում կային հարուստ անհատներ, որոնք կարող էին խոշոր նվիրատվություն-

ներ անել: Եվ Մետրոպոլիտը որոշում է դիմել մեծահարուստ Անդրեաս և Մարտիրոս Խանդամիրյան եղբայրներին:

Խանդամիրյանները պատրաստակամությամբ հանձն են առնում յոթ տարի հոգալ դպրոցի ծախսերը, գրում են վեց կետից բաղկացած պարտավորագիր: Մետրոպոլիտը ի նշան երախտագիտության խոստանում է նրանց Ս.Աննայի շքանշան, սակայն անկատար է մնում և՛ Խանդամիրյանների պարտավորագիրը, և՛ Ս.Աննայի շքանշանի պարգևատրումը, իսկ այս պատմությունը մնաց իբրև հուշարձան «բարեգործության»՝ պատմության համար (Լեո, էջ 195):

Դպրոցի պահպանության ծախսերը հոգալու աղբյուրներ որոնելու ընթացքում մետրոպոլիտը որոշեց թեմի հոգևորականների համար տուրք սահմանել: Սակայն այս կարգը ընդունելություն չգտավ հատկապես Շուշվա գավառում:

Սեմինարիան բացվելուց հետո գրեթե չի փոխվում: Ուսուցչական կազմը մնում է գրեթե նույնը, մեծ մասամբ շարունակում են ծառայել անվճար՝ նյութական միջոցների սղության պատճառով:

Առանձին ուշադրության է արժանի տեսուչ Խիտրովի գործունեությունը: Ըստ գոյություն ունեցող տվյալների նա սեմինարիան կառավարում է մինչև 1850 թ.: Աշխատանքի անցնելուց մի տարի հետո Խիտրովին նշանակում են աշխատավարձ տարեկան 200 ռուբ.: Կարևոր մի հանգամանք, որ վկայում է նրա գործունեության մասին: Շուշվա թեմական հոգևոր դպրոցն ընդունվել կարող էին ոչ միայն հոգևորականների երեխաները, այլ նաև աշխարհականների: Այդ տեսակետը պաշտպանում էր նաև մետրոպոլիտը իբրև ժողովրդական մարդ, գործիչ. «Ժողովուրդք յուսան թէ սրդիք խրեանց ևս յուսան մտանիլ յուսումն ի յոգեւոր ճեմարանին անդ ապա թէ ոչ բազմաց կամք են չառնել ինչ օգնութիւն այն, ճեմարանի և մետրոպոլիտը ոչինչ տեսակաւ» (Լեո, էջ 201):

Տեսուչ Խիտրովի վարչության դրական կողմերից էր նաև այն, որ կոնսիստորիային հաշվետվություն էր ներկայացնում դպրոցի ներքին կյանքի մասին. ուսումնական ծրագրեր, աշակերտների, դասարանների քանակը: Ըստ տեսչի 1845 թ. հաշվետվության սեմինարիան բաղկացած էր երկու դասարանից: Առաջին դասարանում սովորում էր 40 աշակերտ, երկրորդում՝ 7: Ներկայացվում էր դպրոցի ընդհանուր պատկերը՝ հոգևորական սաներ և աշխարհիկ:

1851 թ. Խիտրովն այլևս չէր աշխատում. իբրև տեսուչ էր պաշտոնավարում «գուբերնսկի սեկրետար», Լազարյան ճեմարանի շրջանավարտ, շուշեցի Խաչատուր Յուզբաշյանը:

1852 թ. նոյեմբերին Խ. Յուզբաշյանը սեմինարիայի փակվելու կապակցությամբ դադարեցնում է իր պաշտոնավարությունը իբրև հոգևոր դպրոցի տեսուչ, իսկ Բաղդասար Մետրոպոլիտը մինչև իր արժանապատիվ կյանքի վերջը (1854 թ.) ջանք չխնայեց պահպանելու Արցախի լուսավորող ու ջերմացնող կանթեղը:

ԲԱՂԴԱՍԱՐ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԸ ԵՎ ՇՈՒՇԻԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ

Արշակ Բալյան

Բանալի բառեր *- մետրոպոլիտ, թեմական դպրոց, վանական համալիր, Շուշի, կրթություն, աշակերտ, կաթողիկոս, Գանձասար, Ղարաբաղ, ճեմարան:*

Բաղդասար մետրոպոլիտը (1775-1854 թթ.) «վերջին մոհիկանն է» Արցախ աշխարհի նշանավոր իշխանական Հասան-Ջալալյան տոհմի: Մանուկ հասակից Բ. Հասան-Ջալալյանը ծանոթ է եղել վանական եկեղեցական կյանքին: Նա սկզբնական կրթություն է ստացել հորեղբոր Սարգիս Կաթողիկոսի մոտ: Իբրահիմ խանի և Իսրայել կաթողիկոսի հետապնդումներից խուսափելու պատճառով՝ Բաղդասարը վաղ հասակում որոշակի ժամանակ ապրել է հորեղբոր Սարգսի հետ Գանձակում և Հաղպատում:

1808 թ. Սարգիս կաթողիկոսի հանձնարարությամբ Բաղդասարը վերադառնում է Ղարաբաղ: Կարճ ժամանակահատվածում նա կարգի է բերում Գանձասարի վանական համալիրը:

Սարգիս կաթողիկոսի մահից հետո 1830 թ. Ամենայն Հայոց կաթողիկոս Եփրեմը Բաղդասարին շնորհում է մետրոպոլիտի աստիճան և Գանձասարի թեմի առաջնորդությունը: 1838 թ. հունիսի 22-ին Բաղդասար մետրոպոլիտի ջանքերով բացվում է Շուշիի թեմական դպրոցը մեկ դասարանով և քսան աշակերտով, որտեղ ուսուցիչներից չորսը աշխատում էին անվճար: Թեմական դպրոցում, ի տարբերություն այլ դպրոցների, սովորում էին հասարակության տարբեր խավի ներկայացուցիչներ, և Բաղդասար մետրոպոլիտը առանձնահատուկ հոգատարություն էր ցուցաբերում երիտասարդների կրթության խնդրին: 1842 թ. ուսուցիչների թիվը կազմել է չորս, աշակերտներինը՝ վաթսուն հինգ: Բաղդասար մետրոպոլիտը մահացել է 1854 թ. Շուշիում և հուղարկավորվել Գանձասարի բակում:

МИТРОПОЛИТ БАГДАСАР И ЕПАРХИАЛЬНАЯ ШКОЛА В ШУШИ

Аршак Балян

Ключевые слова *– митрополит,школа при епархии, монастырь, Шуши, образование, ученик, католикос, Гандзасар, Карабах, семинария*

Багдасар Гасан-Джалалян (1775 - 1854) - последний митрополит из знаменитого княжеского рода Хачена. Он вырос и получил образование в духовной, церковной среде. Воспитал его дядя - брат отца Саркис. Из-за притеснений Гасан-Джалалянов со стороны Ибрагим-хана и католикоса Исраела, Багдасару с малых лет приходилось жить с дядей, католикосом Гандзасара Саркисом, в изгнании - в Гандзаке, Ахпате.

По настоянию католикоса Саркиса Багдасар в 1808 г. возвращается в Карабах. За короткое время, преодолевая многочисленные трудности, ему удается вернуть монастырю Гандзасар фамильные имения, резиденцию.

После смерти католикоса Саркиса католикосом Всех армян Епремом Багдасару в 1830 г. присваивается титул митрополита и сан католикоса Гандзасарского, а престол переносится в Шуши.

В этом здании 20 июня 1838 г. митрополитом Багдасаром открывается Шушинская епархиальная школа с одним классом в 20 учеников и четырех учителей без жалования. В отличии от других школ сюда привлекались дети всех социальных сословий общества - Багдасар придавал большое значение учебе молодого поколения. 1842 году в школе было 65 учеников и 4 оплачиваемый учителя.

Митрополит Багдасар скончался в 1854 г. в г. Шуши, похоронен во дворе Гандзасарского монастыря

BAGHDASAR MITROPOLITAN AND EPARCHY SCHOOL IN SHUSHI

Arshak Balyan

Keywords: *metropolitan, school in diocese, Monastery, Shushi, education, pupil, catholicos, Gandzasar, Kharabagh, seminary.*

Baghdasar Hasan-Jalalyan (1775 - 1854) - the last Metropolitan of the famous princely family Khachen: He grew up and was educated in the spiritual, ecclesiastical environment. He was brought up by his uncle - father Sargis, his father's brother. From an early age Bagdasarov had to live with his uncle Sarkis, the Catholicos of

Gandzasar, in exile - in Gandzak Haghpat Because of the oppression of Hasan Dzhalalyan by Ibrahim Khan and Catholicos Yesrael.

In 1808 at the insistence of the Catholicos Sargis, Baghdasar returned Karabakh. In a short time, overcoming many difficulties, he managed to return Gandzasar monastery its estates and residence.

In 1830 after Sargis Catholico's death the Catholicos of All Armenians Eprem assigned Baghdasar the title of Metropolitan and Catholicos of Gandzasar san, and the throne was transferred to Shushi.

Metropolitan Bagdasarov opened the diocesan school in Shushi with one class of 20 students and four teachers without salary 1838 20 June. Unlike other schools here involved children of all social classes of society. Baghdasar attached great importance to the younger generation studies. There were 65 pupils and 4 paid teachers in the school in 1842.